ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՌՆՈԼԴ ՍԱՄՎԵԼԻ

իրավաբանական գիտությունների թեկնածու,

Միացյալ Թագավորության Էդինբուրգի համալսարանի

իրավունքի մագիստրոս

Ծնվել է 1995 թվականի ապրիլի 1-ին, ք. Երևանում:

Կրթություն

2015 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը:

2016 թվականին ավարտել է ՀՀ փաստաբանական դպրոցը և ստացել փաստաբանական գործունեության արտոնագիր (գործողությունը կասեցված է):

2017 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրան:

2018 թվականին ավարտել է Նորվեգիայի արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ և Լատվիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ կազմակերպված՝ Ռիգայի իրավունքի դպրոցի՝ «Եվրոպական իրավունք և տնտեսություն» միջազգային կրթական ծրագիրը Լատվիայում, ուսումնական այցեր կատարել Եվրոպական միություն կառույցներ՝ տեղակայված Բրյուսելում, Լյուքսեմբուրգում և Ֆրանկֆուրտում:

2020 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտուրան:

2020 թվականին Երևանի պետական համալսարանի թիվ 001 մասնագիտական խորհրդում «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների տեսական և գործնական հիմնահարցերը ՀՀ քրեական դատավարությունում» վերտառությամբ ԺԲ.00.04 մասնագիտությամբ ատենախոսության պաշտպանության հիման վրա շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2021 թվականին մրցույթային հիմունքներով շնորհվել է Միացյալ Թագավորության Կառավարության «Չիվնինգ» կրթաթոշակ (կրթաթոշակը շնորհվում է ամբողջ աշխարհի ավելի քան 60.000 դիմորդների 2-3%-ին՝ հիմնվելով առաջնորդության և հաղորդակցության հմտությունների, ուսումնական նպատակների և մասնագիտական գործունեության տեսլականի գնահատման վրա):

2022 թվականին նշված կրթաթոշակով ավարտել է Միացյալ Թագավորության Էդինբուրգի համալսարանի «Մարդու իրավունքներ» մագիստրոսական ծրագիրը: Մագիստրոսական ատենախոսության թեման ունեցել է «COVID-19-ը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը» վերտառությունը, որի գերազանց գնահատման հիման վրա 2022 թվականի նոյեմբերի 25-ին շնորհվել է իրավունքի մագիստրոսի աստիճան:

2022 թվականին առկա/հեռակա ձևաչափով կարճաժամկետ դասընթացներ է անցել Վիեննայի հակակոռուպցիոն ակադեմիայում (կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային գործիքների մասին), Լոնդոնի թագավորական քոլեջում (իրավաբանական ծրագրավորման մասին):

<u>Մասնագիտական գործունեություն</u>

2015 թվականին աշխատել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունում՝ որպես «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի իրավախորհրդատու:

2015-2016 թվականներին ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ներառվել է ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն իրականացնող աշխատանքային խմբում՝ որպես փորձագետ:

2015-2016 թվականներին ՀՀ արդարադատության նախարարի հրամանով ներառվել է կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբում՝ որպես փորձագետ:

2016-2017 թվականներին աշխատել է Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում՝ որպես դատավորի օգնական:

2017-2018 թվականներին աշխատել է ՀՀ Վճռաբեկ դատարանում՝ որպես դատավորի ավագ օգնական:

2019 թվականին հանդիսացել է «Սոցիալական տեխնոլոգիաների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացված՝ «Կոռուպցիոն ռիսկերն անձանց կալանավորման իրավակիրառ պրակտիկայում և օրենսդրական խոչընդոտների բարելավման հիմնահարցերը» ծրագրի փորձագետ:

2019-2022 թվականներին աշխատել է որպես ՀՀ Վճռաբեկ դատարանի փորձագետ, իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետ (2021 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը՝ որպես Մեծ Բրիտանիա գործուղված փորձագետ):

2020-2021 թվականներին համատեղությամբ աշխատել է ՀՀ արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն հիմնադրամում»՝ որպես ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը և ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը լրամշակող փորձագետ:

2022 թվականի սեպտեմբերի 13-ից Բարձրագույն դատական խորհրդի նախագահի պաշտոնակատարի որոշմամբ նշանակվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության պետի պաշտոնակատար:

2022 թվականից համատեղությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի ներկայացուցիչն է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Բարձրագույն դատարանների ցանցում:

2018 թվականից համատեղությամբ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս է:

2020 թվականից համատեղությամբ ՀՀ փաստաբանական դպրոցի դասախոս է:

2021 թվականին համատեղությամբ դասավանդել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրում:

<u>Այլ տեղեկություններ</u>

Մասնակցել է մեկ տասնյակից ավելի գիտաժողովների ու հանդես եկել քրեական դատավարության և մարդու իրավունքների պաշտպանության արդի հիմնախնդիրների վերաբերյալ զեկույցներով: 2022 թվականին Լոնդոնի համալսարանում անցկացված կոնֆերանսի շրջանակներում հանդես է եկել «Ալգորիթմների կառավարումը և մարդու իրավունքները» թեմայով զեկուցմամբ:

Հեղինակ է ավելի քան երկու տասնյակ գիտական հոդվածների, մեկ մենագրության:

Բրիտանական «SCRIPTed» միջազգային գիտական ամսագրի խմբագրական խորհրդի անդամ է՝ բժշկական իրավունքի հարցերով տպագրվող գիտական հոդվածների մասով:

Բրիտանական «Արդարություն» հասարակական կազմակերպության անդամ է:

Շոտլանդիայի «Մարդու իրավունքների կոնսորցիում» հասարակական կազմակերպության անդամ է:

Էդինբուրգի Սահմանադրական իրավունքի կենտրոնի անդամ է:

«Հայաստանի իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության անդամ է:

«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության անդամ է:

ՀՀ փաստաբանների պալատի անդամ է:

2020 թվականից որպես իրավաբան-գիտնական հանդիսացել է քննիչների, դատախազների և դատավորների թեկնածուների գնահատման հանձնաժողովների անդամ:

Ունի ՀՀ դատական ծառայության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան:

Տիրապետում է հայերեն (մայրենի), ռուսերեն (գերազանց) և անգլերեն (գերազանց) լեզուների:

<u>Գիտական հրապարակումների ցանկ</u>

1. Համահեղինակությամբ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ, ի.գ.դ., պրոֆեսոր Լ.Թադևոսյանի, «ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից գործերի ենթակայության և ընդդատության վերաբերյալ վեճերի լուծման լիազորության իրացման հիմնախնդիրները», Դատական իշխանություն գիտական ամսագիր, 9-10 (267-268), Երևան, 2021, էջեր 3-19,

2. Համահեղինակությամբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր, ի.գ.թ., դոցենտ Ա.Հովհաննիսյանի, «Постановление Европейского суда по правам человека об утверждении одностороннего заявления или дружественного урегулирования как основание для исключительного пересмотра по новым обстоятельствам в уголовном судопроизводстве Республики Армения», Պետություն և իրավունք գիտական ամսագիր, 2021, №2(90), էջեր 96-104,

3. «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման տեսական և գործնական հիմնահարցերը քրեական դատավարությունում», Հայրապետ հրատ., Երևան 2021, 296 էջ (մենագրություն),

4. «Իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների մասին շահագրգիռ անձանց ակտիվ ծանուցումը՝ որպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներից օգտվելու նախապայման», Դատական իշխանություն, գիտական ամսագիր, 7-8 (253-254), Երևան, 2020, էջեր 98-113,

5. «Դեպքից հետո հոգեկան հիվանդությամբ հիվանդացած անձանց գործերով դատական վարույթի առարկան և սահմանները», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 1(1)2019, էջեր 242-253,

6. «Քաղաքացիական հայցի քննությունը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթում», Դատական իշխանություն գիտական ամսագիր, մարտ-ապրիլ, 3-4 (249-250), Երևան, 2020, էջեր 84-90,

7. «Փորձաքննության ենթարկելու համար անձին բժշկական հաստատությունում տեղավորելու հիմքերն ու պայմանները», Պետություն և իրավունք գիտական ամսագիր, № 1(86), Երևան, 2020, էջեր 71-77,

8. «Procedure for the Application of Medical Enforced Measures as a Special Type of Criminal Procedure», Դատական իշխանություն գիտական ամսագիր, հունվար-փետրվար, 1-2 (247-248), Երևան, 2020, էջեր 82-88,

9. «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հայեցակարգային հիմունքները», Արդարադատություն գիտական ամսագիր, 1(50), Երևան, 2020, էջեր 22-28,

10. «Անվտանգության միջոցների կիրառման իրավական երաշխիքները», Արդարադատություն գիտական ամսագիր, 1(50), Երևան, 2020, էջեր 6-12,

11. «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման դատական վարույթի սահմանները», Դատական իշխանություն գիտական ամսագիր, նոյեմբեր-դեկտեմբեր, 2019, 11-12 (245-246), Երևան, 2019, էջեր 73-81,

12. «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի առանձին տեսակների տարբերակման հիմնահարցերը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2(2) 2018, ԵՊՀ հրատ., Երևան, 2019, էջեր 310-326,

13. Համահեղինակությամբ՝ ի.գ.թ., դոցենտ, Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արսեն Նիկողոսյանի, «Դատախազի կողմից ապացույցներ ձեռքբերելու քրեադատավարական լիազորությունների հարաբերակցությունը մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու սահմանադրաիրավական գործառույթի հետ», Դատական իշխանություն գիտական ամսագիր, № 5-6 (227-228), Երևան, 2018, էջեր 46-56,

14. «Մինչդատական վարույթի նկատմամբ գրավոր ընթացակարգով դատական վերահսկողությունը որպես առաջին ատյանի դատարանների ծանրաբեռնվածության նվազեցման եղանակ», «Դատական իշխանություն», № 5-6 (227-228), 2018, էջեր 57-68,

15. «Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթին անմեղսունակ անձանց մասնակցության ապահովման գործնական հիմնախնդիրները ՀՀ քրեական դատավարությունում», ԵՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 1(1) 2018, ԵՊՀ հրատ., Երևան, 2018 էջեր 336-351,

16. «Փորձաքննության ենթարկելու նպատակով անձին բժշկական հաստատությունում տեղավորելու և կալանավորումը որպես խափանման միջոց միաժամանակ կիրառելու վերաբերյալ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի

իրավաչափությունը», ԵՊՀ գիտական հոդվածների ժողովածու 1.2 (25)), ԵՊՀ հրատ., Երևան, 2018, էջեր 180-191,

17. «Գույքի վրա կալանք դնելու հիմնահարցերը քրեական դատավարությունում», Պետություն և իրավունք գիտական ամսագիր, № 1(75) 2017, էջեր 130-139,

18. «Դատավորի անկախ և անկողմնակալ լինելու հիմնահարցերը գործող և նոր քրեական դատավարության օրենսգրքերի իրավակարգավորումների համատեքստում», ԵՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2017, էջեր 26-38,

19. «Հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքի արդի զարգացման հիմնահարցերը», ԵՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2017, 1.6 (23), էջեր 45-56,

20. Համահեղինակությամբ՝ ի.գ.թ., դոցենտ, Վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Արսեն Նիկողոսյանի, «Դատական քննության ընթացքում քրեական գործերի միացման հիմնահարցերը», Դատական իշխանություն գիտական ամսագիր, № 10-11 (208-209), 2016, էջեր 72-82,

21. «Հանրային շահից ելնելով իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափությունը», Միջազգային 3-րդ կոնֆերանսի գիտական հոդվածների ժողովածու (ՌԴ), 2016, էջեր 33-36,

22. «Եվրոպական սոցիալական խարտիայով երաշխավորված իրավունքների իմպլեմենտացման հիմնահարցերը ՀՀ–ում», Միջազգային իրավական հետազոտություն սոցիալական իրավունքների վերաբերյալ, զեկույց, 2016, էջեր 67-124,

23. «Հայերի դեմ իրագործված ցեղասպանության մերժողական քաղաքականության հիմնահարցերն իրավական վերլուծության լույսի ներքո», ԵՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված գիտաժողովի նյութեր, 2016, 1.7 (17), էջեր 12-18,

24. «Վարույթի հանրային մասնակիցների որոշումների և գործողությունների (անգործության) բողոքարկումը մինչդատական վարույթում ՀՀ Սահմանադրության 18–րդ, 19–րդ և ՄԻԵԿ 6–րդ հոդվածների լույսի ներքո», ԵՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 2016, 1.4 (14), էջեր 23-30:

Առնոլդ Վարդանյան

9 դեկտեմբերի 2022թ.